

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

*«Ողորմությունը առաքինությունների թագուհին է, որ շատ մեծ արագությամբ բարձրացնում է մարդուն մինչև երկինք և հանդիսանում է նրա ամենալավ պաշտպանը»:
Հովհան Ոսկեբերան*

Թեև մարդկությունը կարծես թե վաղուց մերժել է (գոնե տեսական մակարդակով) «մարդը մարդուն գայլ է» կամ «մարդը մարդուն թշնամի է» սկզբունքներով կյանքի կազմակերպման մշակույթը, սակայն ներկայիս բազում իրողություններ փաստում են, որ անգամ քաղաքակրթության զարգացման արդի փուլում միջանձնային, ազգամիջյան ու միջպետական հարաբերություններում տեսանելի է մարդկանց տարրական իրավունքների ոտնահարման, մարդասիրական ավանդական արժեքների մերժման կամ անտեսման, թշնամական հարաբերությունների, հակամարդկային վերաբերմունքի ձևերի՝ ատելության, դաժանության, մարդասպանության, ազգասպանության և նմանաբնույթ այլ երևույթների աճ: Համաշխարհայնացման գործընթացի բացասական հետևանքները, հատկապես թագավարակը և դրանով պայմանավորված առանձին պետությունների կողմից իրակացվող խտրական ու միակողմանի քայլերը, թույլ պետությունների նկատմամբ սոցիալտնտեսական «փափուկ» քաղաքականությունը հանգեցրին տարբեր հասարակություններում առկա բարոյական ու սոցիալ-հոգեբանական ճգնաժամի խորացմանը, ավանդական մարդասիրության, բարոյական առաքինությունների գործնական դրսևորումների նվազմանը և եսպաշտական նեղ նկրտումների ավելացմանը: Դա վերաբերում է նաև հայաստանյան հասարակությանը, որում վերջին տարիներին հատկապես կիսագրագետ ու տհաս գործիչների ձեռամբ մարդկանց սկսեցին բաժանել «սևերի ու սպիտակների», «նախկինների ու ներկաների», «թալանչիների ու թալանվածների» և պառակտեցին հասարակությունը, իրար դեմ հանեցին սոցիալական տարբեր խմբերի, սերմանեցին ատելություն և թշնամություն, կասկածանք ու անվստահություն, սրբապղծություն ու ցինիկություն, բթացրին մարդուն վեհացնող այլա-

սիրության, ներողամտության ու գթասրտության զգացումները, խեղաթյուրեցին արդարության ու ճշմարտության, ողորմության ու բարեգործության, ուժականության ու ներողամտության, պատերազմի ու խաղաղության մասին պատկերացումները, դրանով իսկ թուլացրին բազում մարտահրավերների առջև կանգնած ազգի դիմադրողականությունը: Այդ ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է համախմբել ազգի թե՛ նյութական և թե՛ հոգևոր հնարավորությունները, հենվել նրա պատմական փորձառության ու կուտակած մտավոր ժառանգության վրա, այդ թվում նորովի լուսաբանել ու իմաստավորել անցյալի այն մտածողների ուսմունքները, որոնց հիմքում ընկած են մարդուն «մարդկայնացնող» ու «վեհացող», բարոյական արժեքներով մարդու կեցությունը իմաստավորող համամարդկային գաղափարները: Այս առումով տեղին է անդրադառնալ միջնադարյան խոշորագույն մտածող ու եկեղեցական գործիչ սուրբ Գրիգոր Տաթևացու (1346-1409) բարոյափիլիսոփայական վարդապետության մեջ առանցքային նշանակություն ունեցող քրիստոնեական առաքինությունների մասին ուսմունքին¹, որի վերլուծությունն ու գնահատությունը հնարավորություն կտան ավելի ամբողջական պատկերացում կազմելու առհասարակ քրիստոնեական հումանիզմի և ի մասնավորի քրիստոնեական կրոնում մարդու և մյուս արարածների նկատմամբ վերաբերմունքի մշակույթի յուրահասկությունների մասին:

Գրիգոր Տաթևացու բարոյափիլիսոփայական վարդապետության մեջ առանձնակի նշանակություն ունի առաքինությունների մասին ուսմունքը: Հետևելով Արիստոտելին և քրիստոնեական մարդաբանության հիմնարար սկզբունքներին՝ նա գտնում է, որ առաքինությունները առավելապես բնորոշ են բանականությամբ ու կամքի ազատությամբ (անձնիշխանությամբ) օժտված էակներին՝ հրեշտակներին ու մարդկանց: Սակայն ի տարբերություն հրեշտակների՝ մարդը աստվածապարզ և առաքինություններով և անձնիշխանությամբ պայմանավորված որոշումներով կարող է խուսափել մեղքեր գործելուց, հոգեպես «աճել» ու բարոյապես կատարելագործվել, «զի առաքինութեամբ զարդարեաց. զի մի՛ միայն տալովն՝ այլև վարձկանականանան պսակեցէ. զի հրեշտակք՝ ի գոյացական վարձս իւրեանց ոչ կարեն յաւելուլ և ոչ նւագիլ. այլ մարդ կարէ առաքինութեամբ աճիլ»²: Իր աշխատություններ-

¹ Գրիգոր Տաթևացու առաքինությունների ուսմունքի մասին տե՛ս **Оганесян Г.** Святой Григор Татеваци и его нравоучение, Ер., 2009, էջ 96-138, իսկ ողորմության մասին տե՛ս էջ 203-215. **Ս. Ա. Զարայան**, Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքը, Եր., 2020, էջ 108-134: Այս գրքում ողորմություն առաքինության մասին ընդամենը ակնարկվում է, որովհետև հիմնականում վերլուծվում են միջնադարում առավել հայտնի յոթ առաքինությունները՝ հավատը, սերը, հույսը, խոհեմությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը:

² **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Չմերան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 300:

րում Տաթևացին առանձնացնում է յոթ առաքինություն՝ երեքը աստվածային՝ **հավատը, հույսը և սերը**, և չորսը մարդկային՝ **խոհեմությունը, արիությունը, ողջախոհությունը** և **արդարությունը**: Բացի այս յոթից՝ նա դիտարկում է բազմաթիվ այլ առաքինություններ, որոնք ներհատուկ են մարդուն, նրա հոգու առանձին մասերին ու ամբողջական հոգուն, կամ առաքինություններ, որոնք հիմնականում բնորոշ են քրիստոնյա հավատացյալին (հնազանդություն, համբերություն, խոնարհություն, ուղորմածություն, գթասրտություն, ապաշխարություն և այլն): Տաթևացին համոզված է, որ առանց այդ առաքինությունների իմաստավորման, առանց ճշտելու դրանց տեղն ու դերը մարդու կյանքում՝ հնարավոր չէ պատկերացնել ինչպես քրիստոնեական կրոնի մարդասիրական էությունը, միջանձնային հարաբերությունների քրիստոնեական մեկնաբանությունը, այնպես էլ քրիստոնյայի ապրելակերպն ու փրկության գործը: Նա քրիստոնեական առաքինություններից առանձնացնում է **ողորմությունը** (ողորմածությունը, գթությունը, կարեկցությունը, բարեգործությունը, նվիրատվությունը), որովհետև համոզված է, որ այն լավագույնս արտահայտում է քրիստոնեական արժեհամակարգի ու բարոյականության, աշխարհի ու մարդու նկատմամբ քրիստոնեական վերաբերմունքի էությունը (այս առումով քրիստոնեությունը հենվում է ողորմության վերաբերյալ հինկտակարանային հորդորների ու պատվիրանների վրա): Քրիստոնեությունը քարոզում է սեր ու գթասրտություն ուրիշների հանդեպ (այդ ուրիշների մեջ տեսնելով Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված էակների), պաշտպանում այլասիրության, համբերաշխության, հանդուրժողականության, միմյանց օգնելու ու ներելու գաղափարները և մերժում ատելությունը, անգթությունը, մարդուն նսեմացնող ու նվաստացնող չարամիտ արարքները:

Տաթևացին՝ որպես սքոլաստիկական փիլիսոփայության մեթոդներով զինված աստվածաբան, նախ և առաջ սահմանում է ողորմությունը, առանձնացնում դրա տեսակները, նշանակություններն ու գործառույթները, պարզում դրա առնչակցությունները հումանիշ հասկացությունների հետ (ողորմությանն անմիջականորեն առնչակից են գթությունը, կարեկցությունը, բարեգործությունը, նվիրատվությունը, իսկ միջնորդավորված՝ սերը, արդարությունը, ճշմարտությունը, բարությունը, հավատարմությունը և այլն)³, կարևորում ողորմության տիեզե-

³ Օրինակ, ցույց տալով Աստծո մեջ ողորմության և գթության հարաբերակցությունը՝ նա կարծում է, որ թեև դրանք բովանդակությամբ նման են, սակայն դրանց միջև գոյություն ունեն նաև տարբերություններ: Դրանցից են՝ ա) «Նախ, ի դեմքն, զի գթութիւնն անմեղ կացելոցն է. և ողորմութիւնն դարձելոց ի մեղաց», բ) գույթը բնական և ներքին սեր է, իսկ ողորմությունը՝ երկրորդ և արտաքին, գ) գույթը բովանդակ և կատարյալ սերն է, իսկ ողորմությունը՝ մասնավոր, «զի ողորմութիւն ի գթոյն յառաջի և սփռի ի մեզ»: Այլ խոսքով՝ գույթը ավելի լայն հասկացություն է, քան ողորմությունը և դրա դրսևորումները (տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 350-351):

րական, սոցիալ-մարդաբանական, հոգեբանական ու կրոնաբարոյական (փրկաբանական) կողմերը: Ողորմության առաքինության Տաթևվացիական սահմանումներում ու նկարագրություններում⁴ շեշտվում է այն միտքը, որ, նախ, ողորմությունն ունի տիեզերական բնույթ և անխտիր վերաբերում է աշխարհի բոլոր գոյերին: Ողորմած է տիեզերքի Արարիչը, և այս տեսանկյունից ողորմություն է աշխարհի ստեղծումը, գոյերին, այդ թվում մարդուն կեցություն պարզելը, մարդկային կյանքը, Աստծո մարդեղացումը («Այլև ազգ մարդկան ողորմութեան արժանացան մարդեղութեամբն Աստուծոյ»⁵), նոր Օրենքը, մեղքերի թողութունը, չարությունը բարության վերափոխելը, ընդհանուր հարությունը և այլն: Երկրորդ, «Ողորմութիւն է որով երկրաւորքս շահին երկնաւորօքն»⁶: Այսինքն արարված աշխարհում գոյություն ունի աստվածային կարգ. երկնայինները պարտավոր են հոգ տանել երկրայինների նկատմամբ, բարձր «հարկերում» գտնվող գոյերը՝ ցածր «հարկերում» գտնվողների նկատմամբ, կատարյալները՝ անկատարների, բանական էակները՝ անբանների հանդեպ և այլն: Այս կարգը վերաբերում է նաև մարդուն, որը, որպես փոքր տիեզերք, նման է մեծ տիեզերքին, ուստի պետք է ենթարկվի դրանում գործող օրենքներին. «Ստեղծուած ստեղծուածոյ յայլ սեռից՝ ողորմութիւն առնեն. որպէս երկնային մարմինք որք անապական են՝ երկրաւոր մարմնոյս որք ապականացուք են՝ լոյս տան և անձրև. և ոչ ինչ առնուն ի մէնջ. ապա ուրեմն պարտ է որ մարդիկ իւրեանց սեռիցն առնեն վասն իւրեանց օգտին. զի զբազում ինչ փոխարենն առնուն յԱստուծոյ...»⁷: Երրորդ, մարդաբանական ու սոցիալ-հոգեբանական առումով ողորմությունը ցավակցություն ու կարեկցություն է ուրիշների թշվառության ու դժբախտության հանդեպ, այն հոգատարության դրսևորում է սոցիալական սանդուղքի ստորին աստիճանը զբաղեցնողների, նյութական ու հոգեկան վատթար վիճակում գտնվողների նկատմամբ: Տաթևացի ողորմության այս հատկությունները ամրագրում է հետևյալ սահմանումներում. «Եւ դարձեալ՝ ողորմութիւն է կամաւոր ցաւակցութիւն յաղագս այլոյ թշուառութեանց»⁸, կամ՝ «Ողորմությունը ցավակցություն է բնութենակիցների հանդեպ»⁹:

⁴ Տաթևացի, հետևելով Արիստոտելին, տալիս է առաքինության մի քանի սահմանում. «առաքինութիւն է ունակութիւն մտաց բարոք կարգաւորեալ» (**Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 578), «Առաքինութիւն է ունակութիւն մտաց կալովն ի մէջն ի մեր կողմանէ: Մէջն այն է որ ամենայն առաքինութիւն չափաւորն է և մէջն» (**Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, Գ. Պոլիս, 1741, էջ 95), առաքինություն է «կամաւոր ունակութիւն մտաց կալովն ի մէջն ի մեր կողմանէ. սահմանեալ բանականան» (**Գրիգոր Տաթևացի**, Համառօտ լուծումն առաքինութեանցն Արիստոտելի, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 1695, էջ 261բ):

⁵ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 458:

⁶ Նույն տեղում, էջ 584:

⁷ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Չմերան հատոր, էջ 347:

⁸ Նույն տեղում:

⁹ **Ս. Գրիգոր Տաթևացի**, Սողոմոնի առակների մեկնությունը (բնագիրը և թարգմ.՝ Խ. Գրիգորյանի, առաջաբանը և ծանոթագր.՝ Ս. Արևշատյանի), Եր., 2000, էջ 35: Հարկ է

Թեև Տաթևացին մարդու փրկության գործում կարևորում է բոլոր առաքինությունները, այնուհանդերձ առանձնացնում է ողորմություն առաքինությունը՝ այն համարելով կա՛մ համահավասար մյուս առաքինություններին, կա՛մ դրանցից առավել. «Թեպետ ողորմութիւնն երկրորդ ճանապարհ է արքայութեանն (առաջին ճանապարհը Քրիստոսի համար արված մարմնական չարչարանքներն ու հոգևոր աղոթքներն են – Մ. Ջ.), սակայն այլ ամեն առաքինութեանցն հաւասար է և բարձրագոյն»¹⁰: Ողորմությունը հավասար է մյուս առաքինություններին, քանզի վերջիններիս նման մարդուն դարձնում է առաքինի, իսկ մյուսներից բարձրագոյն է, որովհետև բարի գործերով այն գերազանցում է բոլորին: Փաստորեն, կարելի է ասել, որ ողորմությունը «առաքինությունների թագուհին է» (Հովհան Ոսկեբերան), քրիստոնեական սիրո ու բարության մարմնավորումը և բարի գործերի պասկը: Ողորմությամբ կարելի է ավելին «վաստակել», քան մյուս առաքինությունների միջոցով, կարելի է անել այնպիսի բաներ, որ մյուսները չեն կարող. «Ձայն գործն գոր ա՛յլ առաքինութիւն ոչ կարէ առնել՝ ողորմութիւնն առնել»¹¹: Օրինակ, ողորմությունը պատվական է խոհեմություն (իմաստություն) առաքինությունից, որովհետև սատանան կարող է իր իմաստությամբ կամ խորամանկությամբ հաղթել մարդուն, սակայն ոչ ողորմությամբ, որովհետև նա չունի գթալու և ողորմելու հատկություն: Ողորմությունը, լինելով Աստծո «դուստրը» և մարդու «հարսը», հիմք է դնում մի ամուր բարեկամության, և այս իմաստով այն դարձյալ առավել է մյուս առաքինություններից: Տաթևացին մյուս առաքինությունների նկատմամբ ողորմության առավելություններից է համարում նաև այն, որ Ահեղ Դատաստանի ժամանակ, բացի ողորմությունից, մնացյալ առաքինությունները կարող են նույնիսկ չհիշվել: Այս առավելությունները Տաթևացուն հիմք են տալիս պնդելու, որ ողորմությունն առաքինությունների «գլուխն» է. «Ձի թեպետ բազում են առաքինութիւնք գորս գործեն մարդիկ. այլ կատարումն և գլուխ ամենայն առաքինութեանց ողորմու-

նշել, որ երբեմն ողորմությունը (գուցե ողորմություն մուրացողների «մասնագիտության» և ստորաքարշության ու քծանքի տարբեր ձևերի ի հայտ գալու պատճառով) նույնացնում են խղճահարության հետ՝ դրանով իսկ աղավաղելով ողորմություն առաքինության բուն իմաստը: Ժամանակակից ընկալումներում ողորմությունը առավելապես ստացել է բացասական երանգ: Տաթևացու սահմանումներից ելնելով՝ հարկ է տարբերակել ողորմությունը խղճահարությունից, ողորմությունը ուրիշների տառապանքը զգալու և նրան կարեկցելու ու օգնություն առաջարկելու պատրաստակամություն է, իսկ խղճահարությունը՝ տառապողի նկատմամբ վերաբերմունքի զգացական ձև, որը չի ենթադրում օգնություն:

¹⁰ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 375: Հարկ է նկատել, որ Տաթևացին ոչ միայն ողորմության, այլև մյուս առաքինությունների ներկայացնելիս նույնպես գրում է դրանց առավելությունների մասին: Օրինակ, ըստ նրա, **համբերություն** առաքինությունը «բարձրագոյն է քան զայլան», և այս միտքը նա հիմնավորում է բազում փաստարկներով:

¹¹ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 345:

թիւնն է»¹²: Ողորմությունը առաքինությունների «գլուխն» է այն պատճառով, որ դրանով մարդ ավելի շատ է նմանվում Աստծուն, քան այլ առաքինություններ ունենալու դեպքում: Ընդհանրացնելով Տաթևացի ողորմության և մյուս առաքինությունների հարաբերակցությունը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ամեն առաքինութիւնքն լապտերք և լոյսք են. և ողորմութիւնն՝ իւղ և նիւթ լապտերաց»¹³: Դա նշանակում է, որ առանց ողորմության մյուս առաքինությունները չեն կարող «լոյս տալ», այսինքն՝ չեն կարող ամբողջապէս կատարել իրենց գործառնությունները:

Տաթևացին, նկատի ունենալով հոգևորի ու նյութականի համագոյությունը կեցության տարբեր ոլորտներում, հատկապէս մարդու հոգեմարմնական կազմությունը և նրա պահանջումների բնույթը, տարբերակում է ողորմության երկու տեսակ՝ մարմնական և հոգևոր: Մարմնական ողորմության ձևերից են՝ ա) քաղցյալներին կերակրելը, բ) ծարավածներին հագեցնելը, գ) «զգեստաւորել զմերկս», դ) օտարներին հյուրընկալելը, ե) գերիներին փրկելը, զ) հիվանդներին այցելելը, է) մեռյալներին թաղելը: Իսկ հոգևոր ողորմության տեսակներից են՝ ա) պարտապաններին ներելը, բ) մեղավորներին հանդիմանելը, գ) տգետներին ուսուցանելը, դ) երկմիտներին խրատելը, ե) տրտմողներին մխիթարելը, զ) ընկերոջ փրկության համար աղոթելը, է) «համբերել անիրաւութեանցն ընդդէմ ինքեան»¹⁴: Եթէ մարդ չունի «մարմնական փարթաւություն»՝ մեծահարուստ չէ, ապա դա չի նշանակում, թէ նա չի կարող հոգևոր բնույթի ողորմություն անել: Ավելին, երբեմն հոգևոր/հոգեբանական և բարոյական աջակցությունն ավելի մեծ ազդեցություն է թողնում կարիքավորի վրա, քան նյութական/մարմնականը:

Տաթևացին լավատեսական վերաբերմունք ունի մարդու բնության ու էության նկատմամբ, որովհետև համոզված է, որ ինչպիսին Աստված է, այնպիսին էլ Նրա պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդն է: Աստված ողորմած է, արդար, ճշմարիտ, գթասիրտ և այլն, այդպիսինն է նաև մարդը, անշուշտ իր եղական ու չափավոր բնության հնարավորության սահմաններում: Աստված ողորմած է բոլորի, այդ թվում մեղավորների հանդեպ: Նա բազում ձևերով է ողորմում մեղավորներին. ա) Ինքն է կանչում Իրենից երես դարձածներին և խնամում անգամ դեպի Իրեն չդարձողներին, իսկ երբ մեղավորը ընդունում է իր մեղքերը, Աստված քաղցրությամբ է ընդառաջում նրան և այլն, բ) կասկածամիտների նկատմամբ ցուցաբերում է համբերություն, գ) մեղավորներին ողորմում է կարեկցանքով և այլևս չի հիշում զոջացողների մեղքերը, դ) երբեմն փակում է մեղավորների ճանապարհը, որ նրանք չգործեն մեղքեր և այլն: Ողորմություն տվողին Աստված է տալիս ողորմություն: Անողորմությունը Աստծո կողմից պատժելի արարք է, որովհետև դա

¹² **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 380:

¹³ Նույն տեղում, էջ 376:

¹⁴ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 585:

հակասում է Նրա կենսափիլիսոփայությանն ու բարոյական պատվիրաններին: Աստծուն բնորոշ են ողորմությունն ու արդարությունը, որովհետև Նա բնությամբ բարի է, արդարամիտ ու բարերար, որոնցից էլ «յառաջեն առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան»: Աստծո մեջ ողորմությունն ու արդարությունը կատարում են տարբեր գործառույթներ. «Եւ է՛ ողորմութիւն Նորա ձրի շնորհօք և պարգևօք, իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն»¹⁵: Ողորմությունը Նրա կամքի, իսկ արդարությունը իմաստության դրսևորումն է: Տաթևացին, Աստծո բնության մեջ տարբերակելով ողորմությունը և արդարությունը (բնականաբար սա որոշ իմաստով վերաբերում է նաև մարդուն), առավելությունը տալիս է առաջինին. «Ողորմութիւնն ի վերայ ամենայն առաքինութիւնեանց բարձր է. վասն այն գողորմութիւնն նախ դընէ քան զարդարութիւնն»¹⁶: Եթե ողորմությունը բացարձակ ու պարզագույն բարություն է, ապա արդարությունը խառնյալ բարի է, զի «հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս»: Թեպետ Աստված արդար է ու ողորմած, սակայն «յատկագոյն ասի ողորմած քան արդար», «քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն: Իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն Նորա...»¹⁷: Ուրեմն, եթե արդարությունը ինչ-որ առումով կախված է մարդու մասնակցությունից կամ պարզապէս նաև մարդկային գործոնից, ապա ողորմությունը միմիայն Նրա կամարտահայտության արգասիքն է: Ավելին, Տաթևացին մեծացնում է ողորմության գործառույթների շրջանակը՝ կարծելով, որ ողորմությունը ճշմարտության ու արդարության հետ պետության (թագավորության) մեջ հանդես է գալիս որպէս բարգավաճման, խաղաղության ու համերաշխության պահպանման երաշխավորներ. «Ձի արդար իրաւունքն շինութիւն է աշխարհի. յորժամ զբարիսն պատուէ և զչարսն պատժէ, ամենայն չարագործք փախչին. և տեղիքն խաղաղին և շինին: Նոյնպէս և ողորմութիւնն. զի յորժամ վշտակից լինի աղքատաց և ձեռնտու՝ ամենքն փարթամանան»¹⁸: Այս իմաստով ինչպէս արդարությունն ու ճշմարտությունը, այնպէս էլ ողորմության տուրքը, աղոթքը և Աստծո ինամքը միասին «պարսպով» զորացնում ու ամրապնդում են մարդուն, նրան դարձնում գրասպիրտ, մարդասեր ու աստվածասեր: Մարդը պետք է վերաբերվի արարածներին ու մարդուն այնպէս, ինչպէս Աստված է վերաբերվում նրանց: Ամոթալի երևույթ է, գրում է Տաթևացին, երբ էակաները բնությամբ ողորմած են, սակայն հանգամանքների բերումով իրականում անխիղճ ու անողորմ են: Եվ դա այն դեպքում, երբ բնությամբ անողորմ գազաննե-

¹⁵ Նույն տեղում, էջ 457:

¹⁶ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 342:

¹⁷ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 459:

¹⁸ Նույն տեղում, էջ 369:

րը երբեմն լինում են ողորմած: Այս իմաստով տարօրինակ է, որ որոշ կենդանիներ ու թռչուններ պարտադիր խնամում են իրենց ծնողներին, իսկ որոշ մարդիկ անգամ տիրություն չեն անում իրենց ծերացած ծնողներին: Ավելին, ի հակադրություն բարոյագուրկ ու պատվագուրկ այդպիսի մարդկանց, բնության մեջ հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես են կենդանիները օգնության հասնում մարդկանց, երբ վերջիններս հայտնվում են անելանելի վիճակում. «Ձի կենդանիք ոչ թե միայն ի տեսակս իւրեանց առնեն զողորմութիւն, այլև յայլ ազգս. որպէս ասեն թէ, փիղն յորժամ տեսնէ զմարդն մոլորեալ ի ճանապարհէն, և թէ յիւրմէն վախէ, թաքչի փիղն՝ մինչև մարդն ի ճանապարհն գնայ. և անցեալ յառաջիկայս առաջնորդէ նմա...»¹⁹:

Ողորմություն տալու մեջ անսովորը (գուցե անբնականը) այն է, որ այդ արարքը կարծես թե հակասում է մարդու շահին, որովհետև ողորմություն և բարեգործություն անողը իրեն զրկում է ինչ-որ բանից, հրաժարվում իր սեփականությունից, կորցնում իր ունեցվածքի ինչ-որ մի մասը, որը տարիների քրտնաջան ու համառ աշխատանքի արգասիք է: Այս կապակցությամբ ծագում են հետևյալ հարցերը. ինչու է մարդը ողորմություն ու բարեգործություն անում, ի՞նչն է նրան ստիպում դիմելու նման քայլի՝ Աստված, իր իսկ բնությունը, խի՞ղճը, ազգային ավանդույթները, կրոնական պատվիրանները, թե՛ այլ հանգամանքներ: Տաթևացու կարծիքով՝ բազում հանգամանքներ են ստիպում մարդուն դիմելու ողորմության: Օրինակ, «Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր» երկում Տաթևացին նշում է չորս պատճառ՝ մարդու բնությունը, բարությունը, բարեմտությունը և աստվածային օրենքը/պատվիրանը: Դրանցից առաջինը և ամենակարևորը մարդու բնությունն է, քանզի «բնութիւնն ածէ զմեզ ողորմութիւն, զի բնութեամբ է որ ամենայն իր որ բարձրագոյն է, օգնական և կառավար լինի նուսաստից. որպէս երկնային մարմինքն որք բարձրագոյնք են և լուսաւորք, օգնեն երկրաւոր մարմնոց, և կառավարեն զնոսա: Նոյնպէս պարտ է որք ունի զմեծութիւն ընչից, օգնական լինիլ և կառավար աղքատաց. որքոց. այրեաց և ուղղել զնոսա: Այլև բնութեամբ է որ ցաւակցին անդամք իրերաց: Նաև բնութեամբ է որ ստամոքսին զկերակուրն բաշխել ի բոլոր մարմինն»²⁰: Այս պարագային ցայտուն դրսևորվում է Տաթևացու սոցիալ-փիլիսոփայական ու կրոնաաստվածաբանական դիրքորոշման հումանիստական բնույթը. մարդը միաժամանակ տիեզերական ու հասարակական-քաղաքական էակ է և այդ երկու կարգավիճակներում պետք է ունենա միևնույն վերաբերմունքը տիեզերական մարմինների, արարված գոյերի և մարդկանց նկատմամբ: Իբրև տիեզերական էակ՝ մարդը և մյուս արարածները միևնույն Արարչի կողմից միաժամանակ ստեղծված գոյեր են, հետևաբար նրանք համացեղակից են, համահավասար և իրար

¹⁹ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 347:

²⁰ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 367:

հետ կապված են որպես միասնական ընտանիքի ազգակից անդամներ. «Իսկ հաւասար սիրով սիրէ մարդ զմարդ. և ընկեր զընկեր. այլ և մարդ զհրեշտակս. և հրեշտակք զմարդիկ. զի հաւասար արարածք են: Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. զի համասեռ գոյեղէնք են. և այս սիրով շողկապին առ իրեարս»²¹: Արարածների միջև գոյաբանական-ծագումնաբանական միասնությունը հիմք է դառնում մարդու և բնության, մարդու և բուսական-կենդանական աշխարհի միջև միասնության, համերաշխության և փոխադարձ պարտավորվածության ու պատասխանատվության հաստատման համար²²: Միաժամանակ մարդը արարչակարգում ունի բացառիկ կարգավիճակ, հետևաբար պարտավոր է այնպես խնամել իր «հպատակներին»՝ բույսերին ու կենդանիներին, այսինքն՝ իր համացեղակիցներին ու բախտակիցներին, ինչպես երկնային մարմիններն են խնամում երկրայիններին: Օրինակ՝ Տաթևացին նշում է կենդանիներին խնամելու չորս պատճառ՝ ա) Աստծո արարածներն են, հետևաբար՝ «վասն նոցա ստեղծողին, պարտ է խնամել զնոսա», բ) նրանք մարդկանց ծառայներն ու աշխատողներն են, գ) ինչպես հրեշտակները մարդկանց պահապաններն ու խնամողներն են, այնպես էլ մարդիկ պետք է լինեն կենդանիների ու բույսերի նկատմամբ, դ) «անասունքն բաժանակից են մեր. զի այս տեղիքս յորում մեք պանդխտիմք, նոցա է բնական. և մեք հաւասարեցաք նոցա և եկաք աստ»²³, ուստի պետք մարդիկ կարողանան նրանց հետ համատեղ ապրել: Եթե մարդը պարտավոր է ողորմել ու խնամել բույսերը, տնկիները, վայրի ու ընտանի կենդանիներին, ապա «քանի՜ առաւել մարդկան որ պատկերք են յԱստուծոյ առ հասարակ»²⁴: Որպես հասարակական-քաղաքական էակ՝ մարդ պարտավոր է հոգատար լինել սոցիալական վատ վիճակում գտնվողների և առհասարակ կարիքավորների նկատմամբ: Տաթևացին համոզված է, որ թեև մարդկանց միջև կան ֆիզիկական ու սոցիալական կարգի տարբերություններ, սակայն դրանք ոչ թե խանգարում են, այլ, ընդհակառակը, խթանում են փոխշահավետ համա-

²¹ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 143:

²² Այս մոտեցումը ժամանակակից հետազոտողները դիտում են որպես այլընտրանք ծայրահեղ մարդակենտրոն դիրքորոշմանը, որի հիմքում ընկած է տիեզերքում մարդու բացառիկ կարգավիճակի մասին աստվածաշնչյան գաղափարը: Օրինակ, Լ. Ուայթը, որը ժամանակակից բնապահպանական ճգնաժամի արմատները տեսնում է բնության նկատմամբ կրոնական (քրիստոնեական) վերաբերմունքի մեջ, գրում է, որ Արևմուտքի պատմության մեջ Քրիստոսից հետո ամենամեծ հոգևոր հեղափոխականը սուրբ Ֆրանցիսկոս Ասսիզացին, ի հակադրություն Բնության և Մարդու փոխհարաբերության քրիստոնեական պատկերացման, փորձ արեց տապալել Մարդուն իր «**միապետական գահից**» և բոլոր աստվածային գոյերի համար հաստատել դեմոկրատիա: Նա ձգտում էր մարդու անսահման իշխանության գաղափարը փոխարինել բոլոր արարածների հավասարության գաղափարով, սակայն մատնվեց անհաջողության (տե՛ս **Уайт Л.** Исторические корни нынешнего экологического кризиса, в кн.: **Уайт Л.** Глобальные проблемы и общечеловеческие ценности. М., 1990, էջ 200-202):

²³ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 361:

²⁴ Նույն տեղում:

գործակցությունը, որովհետև մեկը լրացնում է մյուսի պակասությունները: Նա նշում է, որ ողորմություն տալիս չպետք է խտրականություն անել՝ «գողորմութիւնն պարտ է անխտիր և հասարակ առնել. չարաց և բարեաց. արդարոց և մեղաւորաց...»²⁵, որովհետև ողորմություն «առնողի» մեջ պետք է տեսնել Աստծո պատկերով ու նմանությամբ մարդուն: Աստված բոլորին իր պատկերով ու նմանությամբ է ստեղծել, հետևաբար՝ «դու գողորմութիւնն առ հասարակ արա պատկերին Աստուծոյ. և մի ընտրեր գարդար և զմեղաւոր. զհաւատացեալ և զանհաւատ»²⁶: Այդուհանդերձ, նա անում է վերապահում, թե ողորմությունը առաջնահերթ պետք է տրվի հիվանդներին, կույրերին, հաշմանդամներին, աղքատներին, արդարներին, հավատացյալ քրիստոնյաներին և այլն: Ողորմությունը խիստ անհրաժեշտ է հատկապես նրանց, ովքեր վտանգներով լեցուն գործերի մեջ են, ինչպես նավարարը՝ ծովում, որը կանգնած է մի քանի վտանգների առջև (ալեկոծություն, ընթացքի շեղում, օտար վայրում կանգնել, բեռի ծանրություն և այլն): Չսուզվելու համար նավարարը պետք է ավելորդ բեռը դուրս թափի, նմանապես մեծահարուստը պետք է օգնի աղքատներին, անի նվիրատվություններ, այլապես չի կարող արքայություն մտնել:

Երկրորդ, ողորմություն տալու մյուս պատճառը բարությունն է, որովհետև ինչ բարություն Աստված տվել է արարածներին, նրանք պարտավոր են նույնը փոխանցելու այլոց: Աստված մարդուն շնորհել է մարմնական ու հոգևոր բազում բարություններ, ուստի մարդը պարտավոր է դրանք փոխանցել կամ նվիրել ուրիշներին, հատկապես դրանց կարիքը զգացողներին: Ողորմությունը պետք է ունենա ընդհանրական բնույթ, պետք է վերաբերի բոլորին (անգամ նրանց, ովքեր ձևացնում են, թե կարիքավոր են (նրանց արհամարհանքով անվանում են «ողորմություն մուրացողներ»), կամ նրանց, ովքեր ծույլ ու անբան են, չունեն ինքնասիրություն ու արժանապատվություն) և ամենակարևորը՝ լինի անշահախնդիր, «զի գողորմութիւնն պարտ է առնել առանց ակնառութեան ամենայն կարօտելոց...»²⁷: Սա համապատասխանում է Քրիստոսի այն պատվիրանին, թե՛ «այլ երբ դու ողորմութիւն անես, թող քո ձախ ձեռքը չիմանայ, թե՛ ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմութիւնը ծածուկ լինի, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի յայտնապես» [Մատթ. Զ 1, 3-4]: Այս կապակցությամբ Տաթևացին շեշտում է հետևյալը. ա) ողորմությունը պետք է լինի կամավոր և անշահախնդիր (սա հարկ է շեշտել, որովհետև մեր օրերում երբեմն ողորմության գործնական դրսևորումը՝ բարեգործությունը, վերածվում է բարեգործի անձնական հեղինականության բարձրացումը ապահովող ծիծաղաշարժ ու տխուր ներկայացման: Յուցադրական բարեգործությունը, որը չի բխում

²⁵ Նույն տեղում, էջ 374:

²⁶ Նույն տեղում, էջ 361:

²⁷ Նույն տեղում, էջ 372:

«սրտից», հակասում է քրիստոնեական ողորմության էությանը), բ) ողորմություն պետք է անել ոչ թե միանգամայա, այլ մշտական, այսինքն՝ ողորմություն անելը պետք է լինի մարդու էության ու ապրելակերպի անբաժան մասը: Այս իմաստով բոլորը՝ հարուստ թե աղքատ, արդար թե մեղավոր, աշխարհիկ թե հոգևորական և այլն, պարտավոր են իրենց հնարավորության սահմաններում օգնության ձեռք մեկնել կարիքավորներին: Եթե ողորմություն պետք է անեն բոլորը, ապա արդյո՞ք դա նշանակում է, որ ողորմություն կարող են անել նաև հանցագործները կամ ուրիշներին թալանած մարդիկ: Թվում է, կլինե՞ր արդար, որ նման մարդիկ հեռու մնային ողորմությունից, որովհետև իրենց արարքներով նրանք գործնականում մերժում են քրիստոնեական բարոյականության պատվիրանները: Տաթևացին, ցուցաբերելով ոչ միայն քրիստոնյային բնորոշ ներողամտություն, այլև հանցագործներին և ունեզրկողներին պատժված տեսնելու ցանկություն, կարծում է, որ հանցագործները, ուրիշների ունեցվածքը գողացած ու հարստացած ունևորները չպետք է արդարանան՝ ասելով, թե իրենց ունեցվածքը իրենցը չէ, գողացված է, հետևաբար ինչպե՞ս կարող են ուրիշների ունեցվածքով ողորմություն անել: Ընդհակառակը, այդպիսիները առավել ևս պետք է ողորմություն անեն, որովհետև դա հնարավորություն է տալիս քավելու իրենց մեղքերը, ապաշխարելու և դրանով իսկ մեղմելու իրենց նկատմամբ ժողովրդի ատելությունը: Նրանք նախ և առաջ իրենց վաստակածից պետք է տան Աստծուն՝ նվիրաբերեն եկեղեցուն, իսկ անօրինական ճանապարհով կուտակածից բաժին հանեն աղքատներին: «Ապա ուրեմն, - եզրակացնում է Տաթևացին, - գողորմութիւնն տալի է անխտիր յամենայն ինչից»²⁸:

Երրորդ պատճառն այն է, որ մարդը բարեմիտ է, և Աստված նրան տվել է ամեն ինչ, որպեսզի չլինի աղքատ, տնանկ, հիվանդ, ուստի նա պարտավոր է այդ միջոցներից տրամադրել նաև աղքատներին: Բարեգործությունը ողորմության գործնական դրսևորման ձևերից է և միաժամանակ հավատի կենդանության նշանը: Առանց բարի գործերի հավատը մեռյալ է. «Եւ որպէս արծուին երկու թևօք թռչի. նոյնպէս և մարդն հաւատով և գործով թռչի արքայութիւնն երկնից»²⁹: Բացի դրանից՝ ողորմությունը և բարեգործությունը մեղմում են հասարակական տարբեր խավերի միջև լարվածությունը (բնակչության մի մասի աղքատությունն ու թշվառությունը կարող են դառնալ սոցիալական անհնազանդության, բողոքի, խռովության ու ապստամբության պատճառ), նպաստում այդ խավերի միջև համագործակցային հարաբերությունների ձևավորմանը:

Չորրորդ պատճառն աստվածային պատվիրանն է, որը պահանջում է սիրել ու հարգել մերձավորներին, ընկերներին, որովհետև այդ սերը տանում է «ի սերն Աստուծոյ»: Թե՛ մարդասիրությունը և թե՛ այլասիրությունը իրենց բոլոր դրսևորումներով՝ սեր, կարեկցանք, գուր, ողոր-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 81:

մություն, բարեգործություն և այլն, քրիստոնեական կրոնի, քրիստոնեական ապրելակերպի ու մշակութակերպի էությունն են:

Տաթևացին համոզված է, որ մարդու համար ողորմությունը բազում առումներով պտղաբեր, օգտավետ ու շահավետ արարք է: Մարդը նաև ողորմություն առաքինությամբ ձևավորվում է որպես սոցիալական ու բարոյական էակ, ձեռք բերում սոցիալապես գնահատելի հատկություններ: Մարդը ողորմությամբ ու հավատքով սրբում է մեղքերը, բուժում հոգեմարմնական հիվանդությունները, մաքրում ախտերը, կատարելագործվում, հաղթում թշնամուն (սատանային) և կարեկցում ուրիշներին: Ողորմության շնորհիվ մարդը իր մեջ բացահայտում է մարդուն: Ողորմություն տվողի հավատն ու հույսը ավելանում են, իսկ ինքը «մեծանում» է և դառնում պատվական: Այս իմաստով ողորմությունը մի արարք է, որը հոգեկան թեթևություն է պարգևում ոչ միայն ողորմություն տվողին, այլև առնողին. մեկը ուրախ է, որ օգնում է իր նմանին, իսկ մյուսը՝ որ իր նմանից ստանում է օգնություն, այսինքն՝ միայնակ չէ իր թշվառության կամ հիվանդության մեջ: Ողորմությունը օգնում է մարդուն ազատվելու մեղքերից, դառնալու անհատականություն և ճիշտ պատկերացում ունենալու կյանքի իմաստի ու նպատակի (փրկության) մասին: Տաթևացու կարծիքով՝ «գողորմութիւնն գեղեցիկ վաստակաւոր է», որովհետև «արւեստիւ շատ շահ բերէ», ավելին՝ նույնիսկ «կարեմք ասել՝ թէ ողորմութիւնն կարէ՛ վաճառականութեամբ զԱստուած յաղթել. զի զժամանակաւորս տամք, և զյաւիտենական կեանսն առնումք»³⁰: Իսկ ողորմության ամենակարևոր «պտուղը» հետևյալն է՝ «ողորմութիւնն սպիտակ է և գեղեցիկ և պայծառ. զի որպէս խարտոցն զերկաթի ժանկն սրբէ և պայծառացուցանէ. նոյնպէս գողորմութիւնն ի վիշտս պայծառացուցանէ զհոգիս տուղին և առնողին»³¹: Որքան առատ է ողորմությունը, այնքան առատ է ապագայում ստացվելիք բերքը: Այս առումով Տաթևացին, հետևելով Պողոս առաքյալին [տե՛ս Բ Կորնթ. 9. 6], ողորմությունը նմանեցնում է սերմի՝ ա) սերմը ցանում են առջևից և ոչ թե հետևից, նմանապես ողորմություն պետք անել այն ժամանակ, երբ մարդ ողջ է, և ոչ թե մեռնելուց հետո, բ) հարկավոր է սերմը այն դաշտում ցանել, որը խոպան է, նմանապես պետք է ողորմություն տալ նրանց, ովքեր չեն օգտվել դրանից (դժբախտաբար, այսօր էլ հանդիպում ենք դեպքերի, երբ «փարթամության» մեջ «խեղդվողը» անամոթաբար օգտվում է կարիքավորների համար նախատեսված պետական կամ բարեգործական կազմակերպությունների հատկացումներից), գ) ինչպես սերմնացանը պարտավոր է լավ սերմ ցանել, այնպես էլ ողորմություն անողը, դ) սերմնանողը ծածկում է սերմը, նմանապես ողորմություն տվողը պետք է ծածուկ պահի իր արածը, ե) երբ սերմը ընկնում է հողի մեջ, թվում է՝ այլևս կորած է, բայց աճում է և

³⁰ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հաստը, էջ 345:

³¹ Նույն տեղում:

տալիս առատ բերք: Նմանապես՝ ողորմություն անելով թվում է՝ տվողը կորցնում է, սակայն, ընդհակառակը, վերջնարդյունքում շահում է, գ) եթե սերմը շտեմարանում պահեն, այն կփտի, նույնպես չողորմելով փչացնում են բարիքը, իսկ տալով՝ պահպանում ու բազմապատկում, է) գեղեցիկ սերմը ցորենն է, որ մի տարում ցանում են, մյուսում՝ հնձում: Նմանապես՝ գեղեցիկ է այն ողորմությունը, որը տալիս են այս կյանքում, սակայն հնձում են հանդերձյալ կյանքում, ը) ցորենը աշնանը ցանում են, սերմը արմատակալում է և գարնանը աճում, եթե չանեն, կցրտահարվի ու չի լինի բերք: Նմանապես՝ ողորմություն անողին նախատում են, թե կորցնում է իր ունեցվածքը, մինչդեռ ինչքան ողորմություն է անում, Աստված հասուցում է բազմակի, ի) ով ինչ ցանի, այն կհնձի: Շատ ցանողը շատ է հնձում, քիչ ցանողը՝ քիչ-քիչ³²: Տաթևացին ողորմության և սերմի համեմատության միջոցով մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ ողորմությունը ոչ թե աղքատացնում, այլ, ընդհակառակը, թե՛ նյութական առումով (Աստված բազմակի փոխհատուցում է) և թե՛ հոգևոր առումով (ողորմություն տվողի խիղճը հանգստանում, հոգին մաքրագործվում է) հարստացնում է մարդուն: Ողորմությունը «ներդրում» է վասն ապագայի. Աստված ողորմություն տվողին լիուլի փոխհատուցում է կամ փոխհատուցելու է հանդերձյալ աշխարհում: Ընդ որում, Աստված կարիքավորների համար խնդրում է (ողորմություն տալը աստվածահաճո արարք է, իսկ ողորմություն տվողը կատարում է Աստծո կամքը) քիչ բաներ (հաց, հագուստ, կացարան և այլն), իսկ տալիս է շատը՝ շնորհ և արքայություն: Այս իմաստով ողորմությունը կարևոր է երկնային արքայություն մուտք գործելու համար՝ «ճշմարտապես փոխ է ողորմութիւն»: Այսինքն՝ Աստված երկրային կյանքում տալիս է մարմնական, իսկ հանդերձյալ աշխարհում՝ հոգևոր բնույթի փոխհատուցում:

Ամփոփենք: Տաթևացու համար ողորմություն առաքինությունը առանձնանում է մյուսներից նրանով, որ լավագույնս արտահայտում է աշխարհի ու մարդու մասին քրիստոնեական վերաբերմունքի, քրիստոնեական աշխարհատեսության, մտածելակերպի ու ապրելակերպի էական գծերը, Աստծո ու մարդու, արարածների ու մարդու, մարդու ու մարդու միջև գոյություն ունեցող այն կապերն ու հարաբերությունները, որոնք հիմնված են սիրո, բարության, գթության, այլասիրության, սոցիալական համերաշխության, փոխօգնության ու ապրումակցության վրա: Նրա համոզմամբ՝ ողորմությունը քրիստոնեական առաքինությունների «գլուխն ու պսակն» է, մարդու բնությունից բխող ամենաաստվածահաճո արարքը, յուրահատուկ հոգեվիճակ, որով մարդ նմանվում է Աստծուն, անշահախնդիր օգնում ու խնամում բոլոր գոյերին՝ որպես Աստծո կողմից արարված համացեղակիցների, իսկ մարդկանց՝ որպես

³² Տե՛ս նույն տեղը, էջ 378-379:

Աստծո պատկերը կրողների, դրսևորում ի վերուստ շնորհված իր «բարութիւնները», խուսափում մեղքեր գործելուց, վշտակցում ու ցավակցում հոգեկան կամ մարմնական ծանր վիճակում գտնվողներին, ի սրտե ու ծածուկ բարեգործություններ անելով կարիքավորներին՝ «պայծառացնում» ու մաքրագործում իր հոգին, արժանանում Աստծո ողորմությանը և այլն: Տաթևացին առանձնացնում է ողորմության երեք յուրահատկություն՝ ա) համատիեզերական բնույթը, որը ենթադրում է թե՛ ծագումնաբանական և թե՛ էկզիստենցիալ առումներով արարվածների միասնությունն ու հավասարությունը, դրանց միջև ուղղահայաց ու հորիզոնական հարաբերությունների առկայությունը, բ) սոցիալական բնույթը, որը նշանակում է կամավոր ցավակցություն և կարեկցություն նյութական ու հոգեկան ծանրագույն վիճակում գտնվողների նկատմամբ, գ) հոգեբանական բնույթը, ինչը նշանակում է, որ ողորմությունը միայն արարք չէ, այլև յուրահատուկ հոգեվիճակ՝ ուրիշներին անվարձահատույց օգնելու պատրաստակամություն և ապրումակցություն, ինչի հետևանքով «պայծառանում» է մարդու հոգին, մաքրվում մեղքերից, ընդ որում դա վերաբերում է թե՛ ողորմություն սովորին և թե՛ առնողին:

Բանալի բառեր – *Գրիգոր Տաթևացի, քրիստոնեական բարոյագիտություն, առաքինություն, մարդասիրություն, ողորմություն, աստվածամանություն, բարեգործություն, արդարություն, հոգու փրկություն*

СЕЙРАН ЗАКАРЯН – *Св. Григор Татеваци о добродетели милосердия.* –

Хотя человечество, казалось бы, давно отвергло (хотя бы на теоретическом уровне) организацию жизни по принципу «человек человеку волк», на современном этапе развития цивилизации в личностных, межнациональных и межгосударственных отношениях заметны, с одной стороны, рост вражды, ненависти, жестокости, эгоистических устремлений, с другой – всё реже проявляются гуманистические ценности и нравственные добродетели. В статье анализируется подход св. Григора Татеваци (1346-1409) к осевому понятию его нравственно-философского учения – добродетели милосердия. Согласно Татеваци милосердие есть «глава и венец» христианских добродетелей, богоугоднейшее из деяний, исходящее из человеческой природы, своеобразное духовное состояние, наилучшим образом выражающее существенные черты христианского отношения к миру и человеку, христианского образа жизни и мышления. Милосердие воплощает в себе те формы отношений и связей между Богом и человеком, человеком и миром тварным, человеком и человеком, которые основаны на любви, добре, альтруизме (способности видеть в другом существо, созданное по образу и подобию Бога), социальной солидарности, добровольном сочувствии, бескорыстной взаимопомощи и сопереживании.

Ключевые слова: *Григор Татеваци, христианская этика, добродетель, христианский гуманизм, милосердие, богоподобие, благотворительность, социальная солидарность, спасение души*

SEYRAN ZAKARYAN – *St. Grigor Tatevatsi on Mercifulness Virtue.* – Although it seems that humanity has long rejected (at least on a theoretical level) the cul-

ture of organizing life on the principle of "human is the enemy to human", but at the present stage of civilization development in interpersonal, interethnic, and interstate relations, on the one hand, shows growing up hostility, hatred, cruelty, selfish intentions, and on the other hand – a tendency to reduce of applying the humanitarian values and moral virtues. The article analyzes the understandings of mercifulness virtue, which has core importance in the moral-philosophical doctrine of St. Grigor Tatevatsi (1346-1409). According to Tatevatsi, mercifulness is the "head and crown" of Christian virtues, the most God-pleasing deed coming out from human nature, a unique state of mind, which perfectly expresses the Christian attitude towards the world and human, the essential features of thinking and living Christian way, the existing connections and relationships between God and human, creatures and human, human and human which are based on love, kindness, compassion, altruism (seeing in others the image and likeness after God), social solidarity, voluntary clemency, selfless mutual help, and empathy.

Key words: *Grigor Tatevatsi, Christian ethics, virtue, Christian humanity, mercifulness, Godlikeness, charity, social solidarity, the salvation of the soul*